ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 դեկտեմբերի 2024 թվականի N 1914 - Ա

ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱՋՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը 2025 թվականի համար «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» ծրագրով նախատեսված անասնաբուժության մեջ կիրառվող Բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ դաբաղի վիրուսի A Իրան 2005 և AG -VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 և SAT-2 տիպերի դեմ պահանջվող պատվաստանյութի (այսուհետ՝ պատվաստանյութ) ձեռքբերումն իրականացնել Ռուսաստանի Դաշնության «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» դաշնային պետական բյուջետային հաստատությունից:

2. Սահմանել, որ պատվաստանյութի գնումն իրականացվելու է «Գնումների մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ մեկ անձից գնման ձևով:

3. Պատվաստանյութի մեկ մլ արժեքը սահմանել 172.36 դրամ (ներառյալ ԱԱՀ-ն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.12.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ